ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ---------- 2021թ. N --- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով, 67-րդ հոդվածի 1-ին մասի ժբ) կետով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի հ. 69-Ա որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2020 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությունների կողմից շահութաբաժինների վճարումները Երևանի բյուջե կատարվում են եռամսյա ժամկետում (ամսական հավասար չափերով), բայց ոչ ուշ, քան մինչև հոկտեմբերի 1-ը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2020 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին» որոշման ընդունումը պայմանավորված է Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի հ.69-Ա որոշման (խմբագրված 23.12.2020թ. հ.312-Ա որոշմամբ) կատարմամբ (այսուհետ՝ Որոշում)։

Համայնքի սեփականություն հանդիսացող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող ընկերությունների 2020 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման համար հիմք են հանդիսացել կազմակերպությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև Երևանի բյուջե տարեկան շահութաբաժնի հաշվարկման բազաները և վճարման չափի առաջարկության մասին տեղեկանքները, շահութաբաժինների, զուտ շահույթի բաշխման ուղղությունների վերաբերյալ կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունները։

Համայնքի սեփականություն հանդիսացող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող և գործունեություն ծավալած 47 ընկերություններից 2020 թվականի տարեկան տնտեսական գործունեության արդյունքներով շահույթով են աշխատել 27 ընկերություններ (որից՝ 2 հանձնված են հավատարմագրային կառավարման), որոնց զուտ շահույթը կազմել է 542816.0 հազ. դրամ, իսկ առանց հավատարմագրային կառավարման հանձնված ընկերությունների՝ 444655.8 հազ. դրամ։

Շահութաբաժնի հաշվարկման բազան՝ հաշվի առնելով Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի հ.312-Ա որոշմամբ կատարված լրացումները և փոփոխությունները, կազմում է 467284.7 հազ. դրամ, իսկ վճարող հանդիսացող կազմակերպությունները թվով 28-ն են։

«Երքաղլույս» ՓԲԸ-ի մասով ներկայացվել է առաջարկություն շահութաբաժնի վճարումից ազատելու վերաբերյալ՝ հիմք ընդունելով Որոշման 3-րդ կետի դրույթները՝ Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպություններում կարող են բաժնետերերի ընդհանուր ժողովների (Երևան քաղաքի ավագանի) քվեարկությանն ու հաստատմանը դրվել Երևան համայնքի մասնակցության դիմաց ստացված զուտ շահույթից Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի 40 տոկոսից պակաս չափեր։ «Երքաղլույս» ՓԲԸ-ի զուտ շահույթը կազմել է 230308.0 հազ. դրամ, որի 40%-ը կազմել է 92123.2 հազ. դրամ։ Շահութաբաժնի վճարումից ազատումը պայմանավորված է նրանով, որ ՀՀ կառավարության 2021թ. մարտի 25-ի հ.415-Ն որոշմամբ Երևան քաղաքի արտաքին լուսավորության ծառայությունների համար ՀՀ պետական բյուջեից հատկացվող գումարը նվազեցվել է 1.500.000,0 հազ. դրամով՝ նախատեսված 2.229.952,0 հազ. դրամի դիմաց հատկացվելու է 729.952,0 հազ. դրամ (ընդամենը 32.7 %-ը)։ Ընկերության բնականոն գործունեությունն ապահովելու համար Երևան քաղաքի բյուջեից անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ ֆինանսավորել 1.243.794,0 հազ. դրամ։ Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է «Երքաղլույս» ՓԲԸ-ին ազատել շահութաբաժնի վճարումից։

Այսպիսով, շահութաբաժինների հաշվարկման բազան կազմում է 236.976,7 հազ. դրամ, որից վճարման ենթակա շահութաբաժնի գումարը կկազմի 94.790,7 հազ. դրամ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2020 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնների չափերը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2020 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնների չափերը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
-------» ---------- 2021թ.
Թ ---------- Ա որոշման

Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2020 թվականի տարեկան զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը

հազ.դրամ

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	2021 թվականի տարեկան զուտ շահույթ	Շահութա-բաժնի հաշվարկման բազա	Համայնքի մասնակցու-թյան շահութաբաժին	Պահուստա-յին կապիտալ	Միասնական բազմանպատակային հիմնադրամ	Վնասների նվազեցում
1	«Շտապբուժօգնություն» ՓԲԸ	-61610.0	6186.0	2474.4			
2	«Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ	3449.0	3449.0	1379.6	1748.0	321.4	
3	«Քաղաքային Էնդոկրին դիսպանսեր» ՓԲԸ	27.0	27.0	10.8			16.2
4	«Թիվ 8 պոլիկլինիկա» ՓԲԸ	-5853.0	1260.0	504.0			
5	«Թիվ 12 պոլիկլինիկա» ՓԲԸ	19177.0	19177.0	7670.8	1200.0	10306.2	
6	«Թիվ 13 պոլիկլինիկա» ՓԲԸ	2571.0	2571.0	1028.4		1542.6	
7	«Թիվ 15 պոլիկլինիկա» ՓԲԸ	374.0	426.0	170.4	63.9	139.7	
8	«Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ	2543.0	2543.0	1017.2	127.1	1398.7	
9	«Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ	4394.0	11188.0	4475.2			
10	«Թիվ 20 պոլիկլինիկա» ՓԲԸ	15453.9	15453.9	6181.6	3300.0	5972.3	
11	«Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ	410.8	410.8	164.3	200.0	46.5	
12	«Նուբարաշեն» պոլիկլինիկա» ՓԲԸ	3190.0	3190.0	1276.0		1914.0	
13	«Նորագավիթ պոլիկլինիկա» ՓԲԸ	174.2	174.2	69.7		104.5	
14	«Սարի թաղ» պոլիկլինիկա» ՓԲԸ	730.0	730.0	292.0	219.0	219.0	
15	«Արշակունյաց պոլիկլինիկա» ՓԲԸ	9194.2	9231.2	3692.5	5501.7		
16	«Կարմիր Բլուր» պոլիկլինիկա ՓԲԸ	4124.0	4124.0	1649.6		2474.4	
17	«Արաբկիր մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ	768.3	768.3	307.3		461.0	
18	«Թիվ 9 մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ	58.8	58.8	23.5	35.3		
19	«Երևաննախագիծ» ՓԲԸ	44699.0	44923.6	17969.4	22146.2	4583.4	
20	«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ	42415.0	42415.0	16966.0	23041.0	2408.0	
21	«Երքաղլույս» ՓԲԸ	230308.0	230308.0			230308.0	
22	«Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ	16843.0	16843.0	6737.2	3010.0	7095.8	
23	«Նոր բարեկարգում» ՓԲԸ	-28366.6	6871.5	2748.6			
24	Ջրային կառույցների ՓԲԸ	6944.0	7647.8	3059.1			3884.9
25	«Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ	33336.0	33336.0	13334.4		20001.6	
26	«Երևանի Հմայակ Խաչատրյանի անվան մանկապատանեկան համայիր մարզադպրոց» ՓԲԸ	3298.8	3798.8	1519.5		1779.3	
27	«Աջափնյակ-վերելակ» ՓԲԸ	166.8	166.8	66.7		100.1	
28	«Անխափան վերելակ» ՓԲԸ	6.0	6.0	2.4		3.6	
	ԸՆԴԱՄԵՆԸ	**348826.2**	**467284.7**	**94790.7**	**60592.2**	**291180.1**	**3901.1**